ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Միհրան Խաչատրյան, Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

(կեցն ուժը կորցրել է 23.03.23 N 326-Ն)

Գործուղման վայրը և ժամկետները.

2024 թվականի մարտի 4-ից 8-ը Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն

Հրավիրող կողմը.

Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն (ICAO)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գուծուղման նպատակն էր մասնակցել Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության եվրոպական և հյուսիսատլանտյան տարածաշրջանի գրասենյակի AVSEC խմբի 11-րդ հանդիպմանը

Քննարկված թեմաները.

Հանդիպման ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները.

Համաշխարհային մակարդակի վերջին զարգացումները, ինչպիսիք են AVSECP/34 և դրա աշխատանքային և հետազոտական խմբերի գործունեությունը: ICAO համագործակցությունը ՄԱԿ-ի այլ կազմակերպությունների հետ և հետագա տարրերը, որոնք համապատասխանում են AVSEC-ի համաշխարհային պահանջների հետ:

Քննարկվեցին ավիացիոն անվտանգության հետ կապված հարցերը, ինչպես նաև անվտանգությանն առնչվող ոլորտներում աջակցության արդյունավետությունը բարձրացնելու մեխանիզմները:

Քննարկվել են նաև Քաղաքացիական ավիացիաների ազգային անվտանգության ծրագրերի փոփոխությունները, ինչպես նաև անօդաչու թռչող համակարգերի ազգային ռազմավարությունը քաղաքացիական ավիացիայի ոլորտում:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

ICAO-ի անվտանգության շաբաթվա շրջանակներում տեղի ունեցավ կիբերանվտանգության երկրորդ պանելային քննարկումը, որի ժամանակ վեր հանվեց կիբերանվտանգության հետ կապված հարցերի փաթեթը՝ ներկայացնելով ժամանակակից ավիացիոն ոլորտում դրա դերն ու կարևորությունը:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ ICAO-ի եվրոպական և հյուսիսատլանտյան տարածաշրջանային գրասենյակի տնօրեն Նիկոլաս Ռալոյի, ICAO-ի տարածաշրջանային գրասենյակի անվտանգության գծով ներկայացուցիչ Արկադի Մերկուլովի և ICAO-ի տարածաշրջանային գրասենյակի գծով ներկայացուցիչ Հատեմ Ուեսլաթիի հետ: Վերոնշյալ հանդիպումների ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր՝ կապված հետագա համագործակցության և աջակցության հետ, ինչպես նաև քննարկվել է սույն թվականի հունվարի 24-ից մինչև փետրվարի 5-ը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեում անցկացված ICAO USOAP աուդիտի արդյունքները և աջակցման հնարավոր ծրագրերը:

2024 թվականի մարտի 8-ին ICAO-ի և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի միջև ստորագրվել է Management Service Agreement (MSA) համաձայնագիրը, որի շրջանակում ICAO-ի կողմից կտրամադրվի բազմակողմանի աջակցություն՝ ըստ պահանջվող ուղղությունների:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում առաջարկներ հնչեցին տեխնիկական և տեխնոլոգիական վերջին զարգացումների, վերապատրաստումների ծրագրերի, մարտահրավերների վերաբերյալ, ինչպես նաև պետությունների, կազմակերպությունների և

արդյունաբերության ջանքերի վերաբերյալ, որոնց արդյունքում շարունակաբար կդիմակայվեն քաղաքացիական ավիացիայի ոլորտում զարգացող սպառնալիքները:

Ստորագրությունը, ամսաթիվը:

13.03.2024